1852

412-1912 1512-1912

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈՒԲԵԼԵԱՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ԲԱՐՁՐ ՀՈՎԱՆԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԹՈՒՅԼՏՈՒԹԵԱՄԲ

Ծ Ր Ա Դ Ի Ր

ՏԱՌԵՐԻ ԳԻՒՏԻ 1500-ԱՄԵԱԿԻ ԵՒ

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ԱՄԵԱԿԻ

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵՍՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՅՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Տպարան Ս. Էջմիածնի

12797

I

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԻ

ՏՕՆԱԿԱՐԳԸ

Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ուրբաթ՝ հոկտեմբերի 11-ին, երեկոյեան ժամը 5-ին, ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆԸ պատգամաւորների և ամբողջ միաբանութեան ուղեկցութեամբ՝ հանդիսաւոր թափօրով իջնում է Մայր Տաճար՝ ներկայ լինելու ս. Թարգմանչաց յիշատակին կատարուելիք նախատօնակին։

* * *

Շաբաթ՝ ս. Թարգմանչաց տօնին, հոկտեմբերի 12-ին, առաւօտեան ժամը 8-ին հանդիսաւոր երթ ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե. կաթուղիկոսի Օշական՝ ուղեկցութեամբ ամբողջ միաբանութեան և պատգամաւորների։

Պատարագ (10-ին) ս. Մեսրոպի զերեզմանի վերայ։

Հոգեհանգիստ գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին. պատգամաւորների բանախօսութիւններ։

Ճաշ (2-ին). ուղերձների ընթերցում։

* * *

Կիրակի՝ հոկտեմբերի 13-ին, ժամը 9-ին, Մայր Տաճարի Իջման սեղանի վերայ հանդիսաւոր պատարագ և ապա Հայրապետական մաղթանք։

Պատարագից յետոյ՝ ժամը 12-ին, ճեմարանում ցերեկոյթ երգեցողութեամբ և երաժշտութեամբ։

Ճաշ՝ ժամը 3-ին. հեռագրերի ընթերցում։

Շաբաթ եւ կիրակի երեկոները ժամը 7-ին և երկուշաբթի առաւօտեան 10-ին՝ ճեմարանում գիտական բեֆերատներ և խորհրդակցութիւն ուղղագրութեան խնդիրների շուրջը։

Ծանօթ. Շաբաթ և կիրակի երեկոները երաժշտութիւն և հրավառութիւն Վանքի և Ճեմարանի բակում։



II

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԻ

ՏՕՆԱԿԱՐԳԸ

ՀԱՅՈՑ ԲՈԼՈՐ ԹԵՄԵՐՈՒՄ

Շաբաթ, հոկտեմբերի 12-ին, ս. Թարգմանչաց տօնի օրը՝ եկեղեցական դասի, դպրոցական ամբողջ կազմի, և ազգային հաստատութիւնների ներկայացուցիչների և աշակերտութեան ներկայութեամբ՝ հանդիսաւոր պատարագ և բացատրութիւն երկու մեծ տօների պատմական նշանակութեան։

Հոգեհանգիստ գրի և տպագրութեան արուեստի վաստակաւորների յիշատակին։

* * *

Կիրակի՝ հոկտեմբերի 13-ին հանդիսաւոր պատարագ և ապա Հայրապետական մաղթանք նոյն կարգով։

Նոյն օրը՝ տեղական պայմաններին նայելով, կազմակերպել գրական և երաժշտական ցերեկոյթ կամ երեկոյթ՝ եկեղեցական, կրթական և այլ ազգային հաստատութիւնների պաշտօնատար անձանց ներկայութեամբ։ Հանդէսը բանալ «Հայր մեր»-ով և ս. Թարգմանչաց կամ ս. Էջմիածնի շարականով։

Շաբաթ եւ կիրակի ամեն տեղ ժողովարարութիւն յօգուտ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՖՈՆԴԻ. Կովկասում՝ Նորին Կայսերական Մեծութեան Տ. Փոխարքայի թոյլտուութեան համաձայն, Ռուսաստանում՝ Ներքին գործոց Տ. Նախարարի։

Ծանօթ. շատ եկեղեցիներ ունեցող կեդրոններում եկեղեցական հանդէսները կարող են կատարուել մի կամ մի քանի եկեղեցիներում՝ տեղական Հոգևոր Վարչութեան կարգադրութեամբ։



Այս ծրագիրը կազմուած է յատուկ ս. Էջմիածնին՝ ենթակայ հատատութիւնների համար։ Միւս բոլոր հատատութիւններից խնդրում է պատուել այս՝ Համազգային մեծ տօնը պատշաճաւոր հանդէսներով եւ յաւերժացնել բարենպատակ ձեռնարկութիւններով։



ՄՄ Հայագիտական գրադարան
MAL011309